

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ. ՀԱՅ-ՖՐԱՆՍԻԱԿԱՆ
ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՈՐ ՈՒՂԵՆԻՇ

Բանալի բառեր՝ ազգային գրադարաններ, հայ-ֆրանսիական մշակութային հարաբերություններ, մշակութային ժառանգություն, հայագիտություն, գրադարանային համագործակցություն, թվայնացում, հնատիպ գրքեր, մշակութային դիվանագիտություն:
Keywords: national libraries, Armenian-French cultural relations, cultural heritage, Armenian studies, library cooperation, digitization, rare books, cultural diplomacy.

Հայաստանի և Ֆրանսիայի տևական հարաբերությունները նշանավորվել են ընդհանուր պատմության, գրականության ու արվեստի մեջ արմատավորված հարուստ մշակութային փոխանակումներով: Ֆրանսիան հայ մտավորականների, գրողների ու արվեստագետների համար դարձել է երկրորդ հայրենիք, ստեղծագործական ներշնչանքի աղբյուր ու ապաստան: Միևնույն ժամանակ, ֆրանսիական մշակույթը, գրականությունն ու լեզուն խորապես ներթափանցել են հայկական մտավոր-մշակութային կյանք: Այս փոխազդեցությունը ծնել է պատմական, գրական, գեղարվեստական և գիտական արժեքավոր ժառանգություն, որը մինչ օրս պահպանվում է ու զարգանում: Հայաստանի և Ֆրանսիայի մշակութային երկխոսության արդյունավետությունը պայմանավորված է ընդհանուր արժեքներով ու փոխադարձ հարգանքով: Ֆրանսահայ համայնքի ակտիվ դերակատարությունը, Ֆրանկոֆոնիայի շրջանակներում համագործակցությունն ու մշակութային ժառանգության պահպանման ծրագրերը այս ոլորտի առանցքային ուղղություններն են: Մշակութային դիվանագիտությունը հնարավորություն է տալիս ոչ միայն ներկայացնել մեր երկրների մշակութային հարստությունը, այլև կամուրջներ կառուցել հասարակությունների տարբեր սերունդների միջև:

Երկու երկրների ազգային գրադարանները, որոնք հանդես են գալիս իբրև մշակութային ժառանգության պահպաններ ու միջմշակութային երկխոսության հարթակներ, այդ կապերի զարգացման գործում ևս կարևոր դերակատար են: Ազգային մտավոր ժառանգությունը պահպանելուց զատ, այդ հաստատությունները ապահովում են դրա հասանելիությունը միջազգային գիտական համայնքի, հետազոտողների և լայն հանրության համար:

Ֆրանսիայի ազգային գրադարանը (Bibliothèque nationale de France, BnF)՝ հայկական ձեռագրերի, հազվագյուտ գրքերի և պատմական տեքստերի իր հարուստ հավաքածուով, տևականորեն եղել և է՝ Եվրոպայում հայագիտական ուսումնասիրությունների համար նշանակալի կենտրոն: Այդ հավաքածուները հարուստ են Ֆրանսիայում հրատարակված հայալեզու գրքերով և պարբերականներով: Հատկանշական է, այս տարին նշանավորվեց

Մարսելում հրատարակած աշխարհաբար առաջին գրքի՝ ԱՐՀԵՍՏ ՀԱՄԱՐՈՂՈՒԹԵԱՆ 350 ամյակով (Մարսել; տպագր. Սոդոմոն Լևոնյանի; տպ. Ս. Էջմիածնի և Ս. Սարգսի, 1675)՝ խորհրդանշելով հայ-ֆրանսիական մտավոր կապերի նոր փուլի սկիզբը:

Ֆրանսիայի ազգային գրադարանի հայկական ժառանգության հավաքածուները հարուստ են ու բազմազան. 350 ձեռագրեր (ամենահին փաստաթղթերը թվագրվում են հայ գրչության ծնունդից), 16-18-րդ դդ. 400 հայկական տպագիր աշխատությունների ժողովածու, մենագրությունների, պարբերականների ժողովածու (ներառյալ Ֆրանսիայի հայկական միությունների կողմից 1920-ականներից սկսած հրատարակված հարյուրավոր պարբերականներ), լուսանկարներ, հնագույն ու միջնադարյան մետաղադրամներ: Ընդհանուր առմամբ, Ֆրանսիայի ազգային գրադարանում պահպանվում են ավելի քան 1000 հայերեն հատորներ՝ բաշխված մի քանի բաժիններում: Այս բացառիկ ժողովածուները պատկերում և փաստում են Հայաստանի և Ֆրանսիայի հարաբերությունների պատմությունը՝ խաչակրաց արշավանքներից մինչև մեր օրեր, ֆրանսերեն և հայերեն:

Հայաստանի ազգային գրադարանը, իր հերթին, պահպանում է ֆրանսիական գրականության և մշակույթի նշանակալի հետքեր՝ ֆրանսերեն հնատիպ գրքերի հարուստ և ուրույն հավաքածուի տեսքով. 2692 միավոր ֆրանսերեն հնատիպ գիրք՝ հրատարակված մինչև 1825 թ.: Հավաքածուն ներառում է ֆրանսիական դասական և ժամանակակից գրականության բազմաթիվ արժեքավոր գործեր, հազվագյուտ հրատարակություններ, գիտական և պատմական աշխատություններ: Ֆրանսերեն հավաքածուն սկզբնավորվել է 19-րդ դարի սկզբից՝ արական գիմնազիայի հավաքածուից և շարունակաբար համալրվել է թե՛ նվիրատվությունների, թե՛ ֆրանկոֆոն երկրների հետ փոխանակման ծրագրերի շնորհիվ:

Որպես մշակութային կենտրոններ՝ Հայաստանի և Ֆրանսիայի ազգային գրադարանները մտավոր ժառանգության պահպանման ու տարածման համար ավելի ու ավելի են համատեղում ջանքերը, հատկապես թվայնացման նախագծերի, նյութերի փոխանակման, համատեղ ցուցահանդեսների, փորձի փոխանակման, ակադեմիական գործընկերությունների միջոցով:

Թվային տեխնոլոգիաների դարաշրջանում մշակութային ժառանգության թվայնացումն ազգային գրադարանների համար առաջնահերթություն է: Մեր երկու հաստատությունները համագործակցում են հավաքածուների թվայնացման, մետատվյալների ստեղծման, թվային պահոցների կառավարման ոլորտներում: Նպատակը հավաքածուները լայն հանրությանը մատչելի դարձնելն է՝ անկախ օգտվողների գտնվելու աշխարհագրական վայրից:

Հայաստանի ազգային գրադարանի միջազգային համագործակցության կարևոր տարրն է դարձել նաև 2025 թվականին Թվային ֆրանկոֆոն ցանցին (Réseau Francophone Numérique – RFN) միանալը: RFN-ը, որը ստեղծվել է 2006 թվականին Ֆրանսիայի ազգային գրադարանի և Քվեբեքի ազգային գրադարանի ու արխիվների համատեղ նախաձեռնությամբ, պաշտոնապես մեկնարկել է 2008 թվականին և այսօր միավորում է 32 մշակութային-ժառանգական հաստատություն՝ տեղակայված 22 երկրում: 2017

թվականին ցանցը ձեռք է բերել իրավաբանական անձի կարգավիճակ՝ դառնալով բելգիական իրավունքի ներքո գործող միջազգային ոչ առևտրային կազմակերպություն: Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության (OIF) աջակցությամբ RFN-ը հանդիսանում է համագործակցության արտոնյալ հարթակ, որը նպաստում է փորձի և գիտելիքի փոխանակմանը՝ վերապատրաստումների կազմակերպման, ուսուցողական գործիքների մշակման և անդամների միջև տեղեկատվության փոխանակման միջոցով: Այս ցանցին Հայաստանի ազգային գրադարանի մասնակցությունը բացում է նոր հեռանկարներ թվային տեխնոլոգիաների կիրառման, մշակութային ժառանգության թվայնացման և ֆրանսախոս համայնքի հետ համագործակցության ոլորտներում:

Հայաստանի ազգային գրադարանը վերջին տարիներին աշխուժորեն գործակցում է Ֆրանսիայի համապատասխան կառույցների հետ՝ կազմակերպելով հայ-ֆրանսիական մշակութային հարաբերություններին նվիրված միջոցառումներ, թեմատիկ ցուցահանդեսներ, և արդեն՝ գիտաժողովներ:

Ապրիլի 29-30-ը Հայաստանի ազգային գրադարանում տեղի ունեցավ «Ֆրանսիա-Հայաստան. պատմական և մշակութային երկխոսություն» միջազգային գիտաժողովը, որն իր նշանակությամբ նախադեպը չունեցող իրադարձություն էր: Երկօրյա այս գիտական միջոցառումը նպատակ ուներ համապարփակ ներկայացնել Ֆրանսիայի և Հայաստանի միջև պատմականորեն ձևավորված բազմաշերտ մշակութային հարաբերությունները և նշանավորեց Հայաստանում Ֆրանկոֆոնիայի երկամսյակի եզրափակումը:

Ֆրանսիայի ազգային գրադարանի նախագահ Ժիլ Պեկուն գտաժողովի գլխավոր խոսնակներից էր: Նա իր ելույթում անդրադարձավ Ֆրանսիայի ազգային գրադարանի հայկական հավաքածուների բազմազանությանն ու դրանց նշանակությանը երկկողմ համագործակցության համար, ինչպես նաև ներկայացրեց երկու երկրների հաստատությունների միջև մշակութային ժառանգության և գիտական համագործակցության հեռանկարները:

Ֆրանսիայի ազգային ժառանգության ինստիտուտի տնօրեն Շառլ Պերսոնան հանդես եկավ «Մշակութային ժառանգության պահպանման ոլորտում հայ-ֆրանսիական համագործակցության հինգ տարիները» թեմայով զեկույցով: Գիտաժողովի պատվավոր հյուրերից էր նաև Ֆրանսիայի Ռոմանի շրջանի Երաժշտության և պարի ազգային դպրոցի տնօրեն, Ստեփան Էլմասի հիմնադրամի և Դրոմի շրջանի նվագախմբի գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր Ալեքսանդր Սիրանոսյանը, որը հեղինակել է հայկական թեմաներով եվրոպական օպերաներին նվիրված հրատարակությունը (*Les métamorphoses de Tigrane / Alexandre Siranossian; avec la collaboration de Maxime K. Yevadian; préface de Reinhard Goebel. - Lyon: Sources d'Arménie, 2014*):

Գիտաժողովին մասնակցեց Խարտիայի ազգային դպրոցի փոխտնօրեն Էլզա Մարգեն-Ամոնը, ով ներկայացրեց Ֆրանսիայի՝ արխիվագիտության, ձեռագրագիտության, դիվանագիտության, պալեոգրաֆիայի, պատմական աղբյուրագիտության և գրադարանագիտության ոլորտներում մասնագիտացած

ամենահեղինակավոր բարձրագույն ուսումնական հաստատություններից մեկը: Իր ելույթում նա անդրադարձավ նշված գիտակարգերի արդի զարգացումներին, ինչպես նաև եվրոպական առաջատար գիտակրթական հաստատությունների և ազգային հիշողության պահպանման ինստիտուտների միջև համագործակցության խորացման հնարավորություններին՝ ընդգծելով մասնագիտական պատրաստվածության և գիտական հետազոտությունների համադրման կարևորությունը ժամանակակից գիտական միջավայրում:

Համակարգչային նշաճանաչման մասնագետ Շահան Վիդալ-Գորենը խոսեց Ֆրանսիայի ազգային գրադարանի հայերեն ձեռագրերի և արխիվների մշակման մասին: Նա Փարիզի գիտությունների և գրականության համալսարանի Խարտիայի ազգային դպրոցի (L'École nationale des Chartes) «Թվային հումանիտար գիտություններ» մագիստրոսական ծրագրի ղեկավարն է, նաև «Կալֆա» տեխնոլոգիական կենտրոնի նախագահն ու հիմնադիրը, որը մասնագիտացած է արհեստական բանականության և ժառանգության պահպանման ոլորտում, ներգրավված է հայկական ռեսուրսների թվայնացման բազմաթիվ նախագծերում:

«Ֆրանսիա-Հայաստան. պատմական և մշակութային երկխոսություն» խորագրով միջազգային երկօրյա գիտաժողովի շրջանակում Հայաստանի ազգային գրադարանը Համագործակցության հուշագրեր ստորագրեց Ֆրանսիայի ազգային գրադարանի, Խարտիայի ազգային դպրոցի, ինչպես նաև «Կալֆա» ժամանակակից տեխնոլոգիաների ֆրանսիական կազմակերպության հետ:

Հայաստանից գիտաժողովին մասնակցեցին և ելույթ ունեցան մշակույթի մի շարք գործիչներ՝ հրատարակիչներ, խմբագիրներ, պատմաբաններ, գրականագետներ, լեզվաբաններ, կինոգետներ, երաժշտագետներ, հայագետներ և ոլորտի այլ ներկայացուցիչներ:

Գրադարանի մեծ ցուցասրահում առաջին անգամ ներկայացված էին ՀԱԳ Անձեռնմխելի գրականության բաժնի՝ Ֆրանսիայում հրատարակված հայերեն և ֆրանսերեն հնատիպ գրականության և մամուլի բացառիկ նմուշներ:

Հայաստանի ազգային գրադարանի Անձեռնմխելի գրականության բաժնում պահպանվում է 2692 միավոր ֆրանսերեն գրականություն, որից մի փոքր մաս ցուցադրված է մեծ ցուցասրահում: Ցուցադրված ամենահին ֆրանսերեն գիրքը «ZONORAS JEAN» (LES HISTOIRES ET CRONIQUE DU MONDE. - PARIS: PIERRE L' HUIILLIER: 1583, 989 p.) գիրքն է: Հավաքածուում մեծ թիվ են կազմում բառարանները, հանրագիտարանները, պատմական և ճանապարհորդական աշխատություններ:

Հավաքածուում պահպանվող ֆրանսերեն ամենավաղ շրջանի գիրքը 1552 թվականին Փարիզում հրատարակված «Համընդհանուր տիեզերագնացություն» գիրքին է: 1739 թվականին Նիդեռլանդների Հաագա քաղաքում տպագրված Եթովպիացիների և հայերի քրիստոնեության պատմությունը ևս ցուցադրված գրքերի ցանկում էին: 1702 թվականին Փարիզում տպագրված Ֆրենսիս Բեկոնի «Նոր Ատլասիդա» աշխատությունը, Դենի Դիդրոյի «Հանրագիտարան»-ի 4-րդ հատորը՝ տպագրված Փարիզում 1754

թվականին, 1787-ին տպագրված Պլուտարքոսի ստեղծագործությունները ևս ներառված էին ցուցադրվող գրականության մեջ:

Երկօրյա գիտաժողովի ընթացքում առանձին ցուցասրահում տեղի ունեցավ հայաստանյան հրատարակչությունների («Անտարես», «Նյումեզ», «Անկյունաքար», «Էդիթ Պրինտ», «Ակտուալ արվեստ», «Նահապետ» հրատարակչությունները և «Ֆիմադարան» ՀԿ) գրքերի ցուցահանդես, որտեղ ներկայացված են հայ-ֆրանսիական առնչություններին նվիրված հրատարակություններ, ֆրանսիական գրականության թարգմանություններ և այլն:

Ֆրանսիայի և Հայաստանի ազգային գրադարանների միջև ձևավորված համագործակցությունը ներկայացնում է երկու երկրների մշակութային դիվանագիտության կարևորագույն բաղադրիչը: Այս համագործակցությունը հիմնված է դարերի ընթացքում ձևավորված մշակութային կապերի վրա և արտացոլում է երկու ժողովուրդների ընդհանուր ձգտումները գիտելիքի, մշակույթի և ժառանգության պահպանման ու տարածման գործում:

Ֆրանսիայի ազգային գրադարանի հայկական հավաքածուները հայագիտության և հայ-ֆրանսիական հարաբերությունների պատմության ու մշակութային փոխազդեցությունների ուսումնասիրության համար անգնահատելի արժեք են: Հայաստանի ազգային գրադարանի ֆրանսերեն հնատիպ հավաքածուն, իր հերթին, վկայում է ֆրանսիական մշակույթի ազդեցության և Հայաստանում եվրոպական գիտության ընկալման մասին: Թվայնացման նախագծերը, փորձի փոխանակումը, վերապատրաստման ծրագրերը, համատեղ ցուցահանդեսներն ու գիտական նախագծերը ցույց են տալիս համագործակցության դինամիկան և երկկողմ հանձնառությունը:

Ազգային գրադարանները գործում են որպես մշակութային կամուրջներ՝ խորացնելով երկրների միջև կապերը: Քանի որ աշխարհը գնալով դառնում է ավելի փոխկապակցված, հայ-ֆրանսիական գրադարանային գործակցության ապագան խոստանում է հետաքրքիր զարգացումներ մշակութային ժառանգությունը պահպանելու և տարածելու գործում՝ կարևորելով դրանց նշանակությունը երկու ազգերի համար և ազդեցությունը գլոբալ մշակութային դիվանագիտության վրա:

SUMMARY

The article provides an analysis of the multifaceted cooperation established between the National Libraries of Armenia and France, which is considered a key component of cultural diplomacy between the two countries. The study examines the history and current state of the Armenian collections of the National Library of France, the exceptionally rich collection of early French literature preserved at the National Library of Armenia, and the main directions of contemporary cooperation between the two institutions, including digitisation, exchange of expertise, joint exhibitions, and scholarly projects. The article pays particular attention to new prospects in the field of cultural heritage preservation and to the further strengthening of institutional ties.